Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ **Սևանի թիվ 4 հիմնական դպրոց**

Թեմա՝ **<<Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով>>**

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ **Հելվեցիա Քոչարյան**

2023

Բովանդակություն

1.Ներածություն.....2

2.Ուսուցչի և գործընկերների համագործակցության տարբերակները.....4

3.Ուսուցչի համագործակցությունը դպրոցում . ինտեգրված դասի կազմակերպում..9

4.Մեթոդական միավորումների ներսում ուսուցիչների համագործակցությունը.....13

4.1 Իրավական կարգավորումներ.....13

5. Սևանի N 4-րդ հ/դ-ի ուսուցիչների համագործակցության փորձառությունը.....17

6. Եզրակացություն.....19

7. Օգտագործված գրականության ցանկ.....22

Ներածություն

Ժամանակակից դպրոցը պահանջ ունի այնպիսի մանկավարժի, ով իր մասնագիտական որակների շնորհիվ կարողանում է հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդները: Այս հրամայականն իր հետ բերել է նոր, ժամանակի պահանջներին համապատասխան որակի կրթություն ունենալու ձգտումը: Իսկ արդյոք ուսուցչի ինքնակրթությունը բավարար է, որպեսզի վերջինս համապատասխանի կրթական նոր պահանջներին: Սա հարց է, որն հաճախ լսելի է ուսուցչական համայնքում:

Կարող ենք վստահաբար ասել, որ ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայն կիրառելի է: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին:

Աշխատանքում քննարկվում է ուսուցչի աշխատանքային խոչնդոտները՝

● ծանրաբեռնվածությունը,

● նորամուծությունները,

● սրընթաց փոփոխությունները,

● գիտելիքի փոխանակման հոգեբանական արմատները,

● գիտելիքները գործընկերների հետ կիսելու պատրաստակամության զարգացումը,

● մանկավարժական ընդլայնված փորձը,

● ցանցային մանկավարժական համայնքներում փորձի փոխանակման տարբերակները / ֆեյսբուքի ուսուցչական համայնքները, libarmedu.am կրթական հարթակը և այլն:

Ուսուցիչները կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչ հմուտ ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար:

Դրան կարող են նպաստել ոչ միայն վերապատրաստումները, այլև դպրոցում գործող մեթոդմիավորումների ճիշտ կազմակերպված աշխատանքները:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսուցիչները համագործակցությունը, օրինակելի փորձի փոխամակումն ու փոխանցումը միտված է ուսումնական գործընթացն ավելի հարուստ, բովանդակային ու արդյունավետ դարձնելուն:

Համագործակցային գործընթացում ուսուցիչների քննարկումները, կրթական նոր եղանակների վերլուծությունը, խնդրահարույց իրավիճակներից ելքերի որոնումը միտված է մեկ ընդհանուր նպատակի՝ սովորողի համար դասը դարձնել հետաքրքիր և այդպիսով բարձրացնել կրթության որակը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ցանկացած միջավայրում գործընկարային առողջ մթնոլորտը, որը հենված է առողջ համագործակցության, փոխոգնության ու օրինակելի փորձի փոխանցման վրա ցանկալի պայման է :

Ճիտ և գրագետ կազմակերպված աշխատանքը կարող է հրաշալի արդյունքներ ունենալ:

Կրթական գործընթացում արդյունավետ գործընկերային միջավայրի հիման վրա նոր հաղթանակներ գրանցելու հանգամանքով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Թեմայի շրջանակներում նպատակը սահմանել եմ՝ ուսուցչների արդյունավետ փոխգործակցության կարևորությունը ուսումնական գործընթացն ավելի որակյալ, մոտիվացված և հասանելի դարձնելու համար:

Հետազոտության խնդիրը: Ձևակերպել ուսուցիչների փորձի փոխանակման տարբերակներ, որոնց միջոցով ուսումնական հաստատությունում գործընկեր ուսուցիչների և ոչ միայն , միջև տեղի է ունենում համագործակցություն, փորձի փոխանակում:

ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Համագործակցությունը ուսուցչի և գործընկերների միջև ինքնանպատակ չէ. այն ուղղված է ինչպես ուսուցիչների ինքնազարգացմանը, այնպես էլ սովորողների մտավոր ու զգայական կարողությունների, ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Մենք մեր աշխատանքում դիտարկելու ենք միայն ներքին համագործակցության ձևերը:

Ներքին գործընկերներ են դիտարկվում համապատասխան դպրոցի ուսուցիչները, մասնավորապես տարրական դասարանների դասվարները, ուսուցչի օգնականները,կերպարվեստի, տեխնոլոգիայի և պարի ուսուցիչները: Տարրական դասարանների դասվարների հետ համատեղ յուրաքանչյուր կիսամյակում պլանավորել որևէ առարկայի մասով թեմատիկ ուսուցման հիմնական տարրերը, նախապես պլանավորել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների օգտագործումը, մշակել աշխատանքային ժամանակացույց պլանավորման մատյանում:

ՀՀ կրթության ժամանակակից համակարգում կարևորվում է ուսուցչի օգնականներնի գործունեության ներդրմանը, որոնք սկսել են ծավալել 2014 թվականից: ՀՀ-ում «ուսուցչի օգնական» հասկացությունը մեկնաբանվում է որպես կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող[2]:

Ուսուցչի օգնականն աջակցում է ուսուցչին.

· դասի պլանավորման, ընդհանուր և անհատական նպատակների սահմանման, դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստման, ինչպես նաև ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում:

· Արտադասարանական միջոցառումների կազմակերպման և իրականացման, խմբի գործունեության վերահսկման և վարքի կառավարման աշխատանքներում:

· Ըստ անհրաժեշտության, դասապրոցեսի ընթացքում և դրանից հետո լրացուցիչ աջակցություն է տրամադրում բոլոր, այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողներին՝ խթանելով կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման, սովորողների անհատական և սոցիալական ձեռքբերումների զարգացման գործընթացը

· Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների հետ համատեղ իրականացնում է դասի արդյունավետության գնահատում, ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների բացահայտում:

· Համագործակցում է սովորողների ծնողների և խնամակալների հետ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների որակյալ ուսուցման և աջակցության տրամադրման համար պատասխանատու են դասավանդող ուսուցիչները, ուսուցչի օգնականները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմը և ծնողները: Ուսուցչի օգնականները, լինելով մանկավարժահոգեբանական աջակցության թիմի լիարժեք անդամներ, պետք է մասնակցեն բոլոր հանդիպումներին և քննարկումներին, հետևողական լինեն յուրաքանչյուր սովորողի մոտ որոշակի հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Փորձի փոխանակման տեսանկյունից առավել կարևորվում է փոխադարձ դասալսումների իրականացումը ներքին գործընկերների հետ, որը կարելի է իրականացնել ձևավորող և թիրախային մոթոդներով: Անհրաժեշտ է դասալսումներն իրականացնել նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան, հետևյալ հաջորդականությամբ,

- Քննարկում՝ թիրախային խմբի/դասարանի որոշում,
- Բուն դասալսում,
- Դասալսման թերթիկի լրացում,
- Ինքնակատարողականի լրացում:

Կարևորվում է ինքնակատարողականի լրացումը ինչպես դասավանդող ուսուցչի, այնպես էլ դասալսող ուսուցչի տեսանկյունից: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դաձնել դասավանդման մեթոդներին, դասարանի կառավարման խնդիրներին, նաև հատուկ կարիքներ ունեցող սովորողների ներգրավմանը դասապրոցեսին: Ինքնակատարողականը քննարկել համատեղ և վեր հանել խնդիրները:

Աշխատանքում հատուկ ուշադրություն է դարձվել ուսուցչի օգնականի հետ համատեղ դասավանդմանը: Համագործակցությունը ուսուցչի հետ խթանում է ուսուցչի օգնականի մասնագիտական աճը և հաստատում այն տեսակետը, որ ուսուցչի օգնականը կարող է ավելի շատ աջակցել փորձառու ուսուցչին համատեղ դասավանդման ընթացքում, քան դասապրոցեսի ընթացքում և դրանից դուրս ուսումնառության դժվարություններ ունեցող սովորողների հետ չպլանավորված գործողություններ կատարելով: Այն ուսուցչի օգնականներին տրամադրում է ուսուցանելու իրական փորձառություն (համատեղ դասի պլանավորում, ուսուցում, արդյունքների վերլուծություն և գնահատում):

Համատեղ դասավանդումն արդյունավետ ուսումնառությանը նպաստող ուսուցման նոր մոդել է, որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջ ժամանակն արդյունավետ օգտագործել և ունենալ բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչներին ապահովել անհատական մոտեցում, նյութի մատչելիություն, իսկ սովորողներին՝ լինել ներգրավված դասապրոցեսում

Համատեղ դասավանդման առավելությունները սովորողների համար.

· սովորող-ուսուցիչ քանակական հարաբերակցության նվազում,

· ուսուցման ոճերի և կիրառվող մեթոդների բազմազանություն,

· մասնակցության և ներգրավվածության ցուցանիշների բարձրացում

· առաջադիմության ապահովում

· անհատական կարիքների և անհրաժեշտ հարմարեցված միջավայրի ապահովում:

Համատեղ դասավանդումն ուսուցման այն ռազմավարություններից է, որը հիմնված է մասնագետների միջև համագործակցության վրա :

Համատեղ դասավանդման առավելություններն ուսուցիչների և համագործակցող մասնագետների համար.

· համագործակցության հմտությունների ընդլայնում,

· դիտարկելու և խնդրի լուծումը գտնելու այլընտրանքներ,

· դասավանդման այնպիսի մոտեցումների կիրառում որոնք միայնակ հնարավոր չէ իրականացնել,

· դասաժամի օպտիմալ օգտագործում,

· սովորողների կրթական կարիքների բավարարում,

· աջակցություն դասի պլանավորման և իրականացման բոլոր փուլերում,

· անհրաժեշտ տեխնիկական միջոցների, պարագաների և նյութերի համատեղ նախապատրաստում,

· միջավայրային խոչընոտների թիմային հաղթահարում,

· դասարանի առաջադիմության ապահովում,

- դասարանի կառավարման մոտեցումների կատարելագործում,
- ուսումնական պլանի առավելագույնս իրականացում,
- մետաճանաչողություն՝ ուժեղ և թույլ կողմերի վերհանում:

Համատեղ դասավանդման հիմնական կիրառվող մոդելները հինգն են՝

1. Աջակցող դասավանդում

2. Ուսուցման կայանների տեղափոխման մոդելով դասավանդում,

3. Զուգահեռ դասավանդում,

4. Այլընտրանքային դասավանդում,

5. Թիմային դասավանդում

Տարրական դասարաններում առավել կիրառելի է աջակցող դասավանդման մոդելը, երբ ուսուցիչներից մեկը դասավանդում է՝ ստանձնելով դասարանի կառավարման դերը և տալով ընդհանուր առաջադրանքներ, իսկ երկրորդ ուսուցիչն (ուսուցչի օգնականը) օգնում է մյուսին, որպեսզի կարողանան հասնել համատեղ պլանավորած դասի նպատակին: Նախապես մշակված քայլերի միջոցով և անհատական ուղղորդումներով ուսուցչի օգնականը մոտենում է բոլոր այն սովորողներին, ովքեր ուսուցանվող նյութն ընկալելու, դասարանի կարգուկանոնին հետևելու և ինքնուրույն աշխատելու հետ կապված լրացուցիչ աջակցության կարիք ունեն՝ ապահովելով դասապրոցեսին առավելագույնս ներգրավվելու և հնարավորինս յուրացնելու նախատեսված նյութը: Այս մոդելը հնարավորություն է տալիս անհատական աջակցություն ցուցաբերել նաև ԿԱՊԿ ունեցող սովորողներին:

Ուսուցիչների համագործակցությունը դպրոցում, ինտեգրված դասերի կազմակերպում

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն : Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները.

- միջառարկայական (interdisciplinary),
- բազմառարկայական (multidisciplinary),
- անդրառարկայական (trans disciplinary):

Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: 70-80-ական թվականներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նորտիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բինար 8 սինթետիկ, համատեղ դասեր: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի

խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը:Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում. 1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում, 2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից, 3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ, 4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից, 5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ: Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ: Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների 9 համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր: Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ:

Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը : Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնականկարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:

Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է. 1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,

2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,

3. ինտեգրման ձևը,

4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,

5. նյութի հաջորդականության կառուցվածքը,

6. նյութի ներկայացման միջոցները,

7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,

8.տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները :

Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես համակարգ ձևավորող բաղադրիչ՝ կարող է հանդես գալ ինտեգրվող բովանդակության միայն այն հատվածը, որը որոշվում է առաջադրանքի նպատակով: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը, որպեսզի այն մատուցվի ամբողջովին, որպեսզի պարզ բացատրվեն կամ պարզվեն դրա ի հայտ գալու պատճառները:

Մեթոդական միավորումների ներսում ուսուցիչների համագործակցությունը

Իրավական կարգավորումներ

Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրա վառ ապացույցը սովորողների զանազան նվաճումներն ու ձեռքբերումներն են: Իսկ արգասաբեր գործելու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից: Ուսուցիչին նման հնարավորություն է ընձեռում փոխգործակցային աշխատանքը հանրակրթական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին համարվող առարկայական մեթոդական միավորման ներսում, որտեղ ուսուցիչն ունի անսահմանափակ հնարավորություններ սեփական մասնագիտական պահանջմունքները բավարարելու համար:

Մեթոդական միավորումները/առարկայական մասնախմբեր/ ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրերն են, որոնք իրականացնում են ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում: Ստացվում է, որ մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է: Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ: Իրենց կատարած աշխատանքով վերջիններս հաշվետու են մեթոդական միավորման նախագահին, ով ի պաշտոնե համակարգում է միավորման աշխատանքները՝ դրանք ամփոփելով միավորման նիստերի ժամանակ: Առարկայական մեթոդական

միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են:

Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է ասել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման: Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը, ինչը կապահովի մրցունակ 12 մասնագետի պատրաստումը: Այդպիսի մասնագետը ունակ կլինի հարմարվել ցանկացած սոցիալական միջավայրին, ծավալել աշխատանքային որոշակի գործունեություն, ինքնակրթվել և ինքնուրույնանալ:

Կրթական գործընթացում, որպես երաշխավոր, ինքնուրույն մտածողության ձևավորող ու գործունեության արդյունքների կանխատեսող հանդիսանում է ուսուցիչը: Հենց այդ պատճառով բարձրացել է պահանջարկը որակյալ, ստեղծագործական մտածողություն ունեցող, կոմպետենտ ու նախաձեռնող, մրցունակ ուսուցչի նկատմամբ, ով ունակ է արդի, դինամիկ աշխարհում ձևավորել համակողմանի զարգացած անձնավորություն: Աշխատանքը մեթոդական միավորումների շրջանակներում ուսուցչին հնարավորություն կտա արագ ու նպատակային կերպով ձեռք բերել անհրաժեշտ կարողունակություններ, որոնք պարտադիր պայմանն են որակյալ կրթական համակարգ ունենալու համար: Բերենք մեթոդական միավորման ներսում ուսուցիչների համագործակցության մի քանի իրավիճակային օրինակներ: Հումանիտար առարկաների մեթոդական միավորման նախագահը մեկ այլ ուսուցչի հետ ներկայանում է սկսնակ ուսուցչի դասին, որպեսզի իրականացնի փոխադարձ դասալսում: Դասալսման նպատակը դասի փուլերի փոխկապակցվածության և մեթոդների կիրառության արձանագրումն է: Արդյունքում արձանագրվում է, որ դասի փուլերը լղոզված էին, մեթոդները բացակայում էին, այլ խոսքով՝ դասը չէր ծառայում նպատակին, և

ուսուցիչը դասի ավարտին չկարողացավ հասնել չափորոշչային պահանջներին: Պետք է հետևողական լինել, որ արձանագրված խնդիրը ստանա համապատասխան լուծում, ուսուցիչը հասկանա՝որտեղ է իր բացթողումը և իրավիճակը շտկվի: Այդ նպատակով գումարվում է արտահերթ մեթոդական միավորման նիստ՝ սահմանելով հետևյալ օրակարգը.

● Ուսուցիչները պետք է հանդես գան դասի ընթացքում մեթոդների կիրառման իրենց փորձի մասին մեթոդական զեկույցներով;

● Զեկույցները պետք է ներկայացվեն սահիկաշարի օգնությամբ;

● Քննարկման միջոցով պետք է պարզաբանվեն մեթոդների կիրառության առավելություններն ու թերությունները՝ հենվելով կոնկրետ օրինակների վրա;

● Փորձառու ուսուցիչները պետք է ունենան ելույթներ՝ դասի տիպերին, փուլերին վերաբերվող;

● Տեղում պետք է կատարվեն առաջադրանքներ: Ստացվեց, որ մեթոդական միավորման նախագահը, պահպանելով մանկավարժական էթիկան, խնդրին տվեց համակարգային լուծում: Անշուշտ, կոնկրետ ուսուցիչը ծանոթացավ դասալսումների մատյանում արված արձանագրությանը, միավորման նախագահի հետ քննարկեց, վերլուծեց իր բացթողումները, սակայն դա չդիտարկվեց որպես խարան: Միավորման ներսում իրականացրած աշխատանքը նպաստեց, որ այլոց օրինակն ու սեփական վերլուծությունը համադրելով՝ սկսնակ, ոչ փորձառու ուսուցիչը հնարավորություն ունենա գործնականում հասկանալ իր սխալն ու լուծումներ գտնել: Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է ասել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման:

Մեթոդական միավորումներն իրենց աշխատանքը պլանավորելիս պետք է հաշվի առնեն կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների շահերը: Ստացվում է, որ սովորողը նույնպես որոշակի կերպով, թեկուզ անուղղակի մասնակցում են կրթական համակարգի այս կամ այն օղակի աշխատանքներին: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ նրանք պետք է դառնան այդ գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով: Այս սկզբունքի համաձայն սովորողի ու ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք, քանի որ կրթողները իրենց ևս սովորողներ են ևսովորողը կարող է աղբյուր հանդիսանալ կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար: Կարծում ենք, որ ամեն բան ուսուցչի ձեքում է:Ուսուցիչն ինքը պետք է նախաձեռնող լինի, փորձի ամեն բան անել, որպեսզի կարողանա ունենալ մասնագիտական բարձր որակներ, համապատասխանի կրթական համագարգի՝ ուսուցչից պահանջվող նոր պահանջներին: Իսկ դրան հասնելու միակ նպատակը գործընկերների հետ կառուցողական փոխհարաբերություններն են, աշխատանքի հանդեպ մոտիվացիան, ինքնակրթվելու և ինքնանդրադարձ կատարելու ցանկությունը: Վստահ ենք, որ կրթության բնագավառում գրանցվող մեծագույն հաջողությունները հենցնման ուսուցիչներին են պատկանում, ուստի կարծում ենք, որ նմանօրինակ հետազոտությունները ևս մեծ ազդեցություն կարող են ունենալ մեր՝ ուսուցիչներիս հաջողությունների վրա:

Սևանի N 4 հիմնական դպրոցի ուսուցիչների համագործակցության փորձառությունը

Մեր՝ Սևանի համար 4 հիմնական դպրոցի օրինակով նշեմ, որ դասվարական մեթոդական միավորման կազմում ունենք 5 ուսուցիչ : Օգոստոսյան վերջին մանկավարժական խորհրդի նիստի ժամանակ մեթոդմիավորման նախագահի կազմած պլանի հաստատումից հետո նոր ուսումնական տարին սկսելով ուսուցիչներն անընդհատ իրար հետ համագործակցելու հնարավորություն են ունենում: Պարբերաբար փոխադարձ դասալսումների իրականացում, համատեղ

դասի պլանավորում , միջոցառումների կազմակերպում, ըստ ուսուցիչների ընտրված թեմաների զեկույցների իրականացում և այլն:

Սրան զուգահեռ համագործակցում ենք դպրոցի մյուս ուսուցիչների հետ : Տարրական օղակում չունենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ , բայց մյուս մասնախմբերն իրար հետ համագործակցում են նաև անհատական ուսումնական պլան գրելու գործընթացում, ԱՈՒՊ-ի իրականացման և պարբերաբար պլանի կատարողականի ու առաջացած խնդիրների քննարկան գործում:

Բացի այս ամենից արդի ժամանակներում խրախուսվում և անհրաժեշտություն է զգացվում օգտվել համացանցի ոչ միայն տեղեկատվական նյութեր ստանալու, այլ նաև մասնագիտական քննարկումներ իրականացնելու նպատակով: Սոցիալական կայքերում ևս քիչ չեն մասնագիտական ուսուցչական խմբերը , որտեղ նեղ մասնագետները քննարկում են առաջացած հարցերը, միմյանց ցուցաբերում մեթոդական , մանկավարժական և մասնագիտական աջակցություն, ինչն ավելի է հեշտացնում ուսուցչի կատարելագործման գործընթացը:

Նաև կուզենայի նշել 2021թ-ի հունվարից Գեղարքունիքի մարզում ներառական կրթության անցման գործընթացին զուգահեռ ուսուցչի օգնականի հաստիքի ներդրմանը և նրա առավելություններին: Առավել պարբերական և արդյունավետ է ստացվում ուսուցիչ- ուսուցչի օգնական համագործակցությունը:

Այդ համագործակցությանը հրաշալիորեն խթանեց Հանրապետական Մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվող «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիրը: Ծանոթացանք դասի պլանավորման և իրականացման ժամանակակից մեթոդներին: Եվ մի քանի ամիս տևող մենթորական աջակցությունը թույլ տվեց պարբերաբար դասի համատեղ պլանավորում և ավարտին անրադարձ իրականացնելով: Մենթորական աջակցությունը հրաշալիորեն ստացված ու արդյունավետ եմ համարում:

Եզրակացություն

Այժմյան կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը, ինչը շատ կարևոր է նոր աշխարհում: Ուստի դպրոցի համար կարևոր է կարողունակ ուսուցիչ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները: Առարկայական մեթոդական միավորումներում համակարգված աշխատանքի արդյունքում ուսուցիչը կարող է ունենալ մեծ նվաճումներ, քանի որ միասնական աշխատանքն ուղղված է բոլորի հաղթանակներին, այն է՝ ունենալ բարձր ու նոր որակի ուսումնական գործընթաց:

Ներկայիս սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրվում է նրանով, որ մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտներ, այդ թվում՝ կրթությունը, սրընթաց զարգանում են տարբեր նորարարությունների ներդրման շնորհիվ: Այս իրավիճակում հայտնված անձը պետք է լինի ոչ միայն դրանց իրականացման գործում կատարող, այլև նորարարական գործընթացների անմիջական ստեղծող: Այսօր ուսուցչից պահանջվում է «պատրաստ լինել ադեկվատ կերպով դիմավորելու յուրաքանչյուր մասնագիտական իրավիճակ, պատրաստ լինել վերապատրաստման արագ փոփոխվող միջավայրում»:

Դպրոցում սովորողների կրթական և ճանաչողական գործընթացի ուսուցչի կառավարման արդյունավետության խնդիրը կարող է լուծվել միայն յուրաքանչյուր ուսուցչի բարձր կոմպետենտության և համապատասխան մասնագիտական կարողությունների ապահովման դեպքում:

Մասնագիտական գերազանցությունը բնութագրվում է ուսուցման, կրթության կառավարման և հոգեպես հարուստ, ֆիզիկապես առողջ մարդու զարգացման մասնագիտական հմտությունների մակարդակով:

Ուսուցչի ժամանակակից ինքնակրթությունը, նրա որակավորման բարձրացումը և մանկավարժական փորձի փոխանակումը պետք է անցնեն ցանցային մանկավարժական համայնքներով:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը, եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կարողունակությունների զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է: Ինչպես նաև արձանագրեցինք, որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար անգնահատելի է համագործակցությունը գործընկերների հետ՝ ինչպես ուղիղ, այնպես էլ առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը:

Ուսումնական հաստատությունների աշխատողների մանկավարժական որակավորումների ձևավորման և զարգացման ամենաարդյունավետ ուղիներն են այլ ուսուցիչների առաջադեմ մանկավարժական փորձի ուսումնասիրությունն ու օգտագործումը, նրանց ինքնուրույն մեթոդական աշխատանքը, մանկավարժական ինքնակրթությունը և ուսուցման և դաստիարակության անձնական փորձի վերլուծությունը:

Հետազոտության ենթակա նյութի ուսումնասիրության արդյունքում ներկայացնում ենք հետևյալ **առաջարկությունները՝**

Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչն ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն, համապատասխան մասնագիտական և անձնային որակներ, որոց զարգացմանը մեծապես կարող է օժանդակել գործընկերների հետ համագործակցությունը;

- Խրախուսելի է մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը դպրոցում, որը հատկապես մեծ ազդեցություն կարող է ունենալ սկսնակ ուսուցիչների մասնագիտական առաջընթացի վրա;
- Առարկայական մեթոդական միավորումը՝ որպես դպրոցի խորհրդակցական մարմինների ստորին օղակ, մեծապես նպաստում է ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացմանը;
- Խրախուսելի է ուսուցիչների մասնակցությունը առարկայական մեթոդական միավորումների աշխատանքին, որը կարող է ուսուցչի համար դառնալ սեփական ներուժը ի ցույց դնելու, համագործակցային հարաբերություններ հաստատելու համար;
- Ուսուցիչները պետք է հնարավորինս շատ համագործակցեն, բանակցեն խնդրահարույց հարցերի շուրջ, կիսվեն իրենց ձեռքբերումներով՝ պահպանելով մանկավարժական էթիկայի նորմերը:
- Շատ կարևոր է փորձառու ուսուցիչների դերը դպրոցում: Վերջիններս ցանկալի է, որ հաճախակի հանդես գան մեթոդական զեկուցումներով, սկսնակների համար իրականացնեն ճանաչողական քննարկումներ, կիսվեն իրենց ձեռքի տակ եղած ուսումնամեթոդական ձեռնարկներով, ուղղորդեն ու առաջնորդեն ոչ փորձառու գործընկերներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա Ափոյան Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում: 2014

2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն)

3. Մանուկ Խաչատրյան, Միեր Դավթյան, Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ,Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2019)

4. Մեթոդական ուղեցույց Ուսուցչի օգնականների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն Երևան – 2022 3 Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

5. Տիքա, Ռ., Էբերի, Բ., Ջոնսթոն, Ք., Պողոսյան, Ա. և Հանթ, Փ. (Խմբ.) (2018) Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 249 էջ

6. Shumway, L.K. (2011) Co-teaching handbook, Ed.D. State Superintendent of Public Instruction